Տեղեկանք

«Հայաստանի Հանրապետության Կառավարության և Չեխիայի Հանրապետության Կառավարության միջև հանցավորության դեմ պայքարում համագործակցության վերաբերյալ» համաձայնագրի կնքման նպատակահարմարության մասին

Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Կառավարության և Չեխիայի Հանրապետության Կառավարության միջև համագործակցություն ծավալելու և ամրապնդելու անհրաժեշտությունը, մտահոգություն արտահայտելով հանցավորության, հատկապես դրա կազմակերպված ձևերի գլոբալացման միտումներով՝ ՀՀ ոստիկանությունը գտնում է, որ Համաձայնագրի վավերացումից հետո Կողմերը, իրենց ազգային օրենսդրությունների համաձայն, կհամագործակցեն հանցագործությունների կանխարգելման, խափանման և բացահայտման գործում:

Կողմերի միջև համագործակցությունը կիրականացվի հանցագործությունների կանխարգելման, խափանման և բացահայտման վերաբերյալ ռազմավարական և գործառնական տեղեկատվության և փորձի փոխանակման միջոցով, մասնավորապես՝ ահաբեկչության և դրա ֆինանսավորման, մարդկանց թրաֆիքինգի, թմրամիջոցների և հոգեմետ նյութերի ապօրինի շրջանառության, անօրինական ներգաղթի, բարձր տեխնոլոգիաների և փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող այլ ոլորտներում, վիճակագրական տվյալների, Կողմերի իրավական ակտերի փոխանակման, համատեղ գիտական հետազոտություններ իրականացնելու միջոցով, փորձագետների և աշխատանքային փորձի փոխանակման, այդ թվում որակավորման բարձրացման դասընթացների, խորհրդակցությունների, սեմինարների և ուսումնական դասընթացների անցկացման միջոցով և այլն:

Ելնելով վերոգրյալից ՀՀ ոստիկանությունը նպատակահարմար է գտնում սույն Համաձայնագրի կնքումը:

ՀՀ ոստիկանության շտաբի պետ,
ոստիկանության գնդապետ **Հովհաննես Քոչարյան**